բայ Սախրա կոչեցեալ, և այրեաց զմի մասն ձեղուան նորին, եւ Սուլթանն եւ նորոգել զայն։ Սա եբարձ հրովարտակաւ զքրկանս և զանիրաւութիւնս 'ի բնակչաց Երուսաղէմի, և եւ գրել զայն 'ի վերայ արձանի և ազուցանել յորմն Տաճարին մերձ 'ի դուռն Սինսիլէ կոչեցեալ։ Յետ այնորիկ առաքեաց զմի ոմն 'ի մեծամեծաց իւրոց հրովարտակաւ յԵրուսաղէմ, 'ի քննին առնուլ զվանօրայս քրիստոնէից, քակել և կործանել զնոր շինուածս եթէ գտանիցէ 'ի նոսա։ Եկեալ առնն քակեաց զտեղիս ինչ, զոր շինեալ էին Լատինք 'ի Սիօնի, էառ 'ի ձեռաց նոցա զգերեզմանն Դաւթի։ և բրեալ եհան զոսկերս կրօնաւորաց, որք թաղեալ էին առ շիրմաւ նորին։ Եւ առ զմի մասն վանաց Ասորւոց և կարդեաց զայն 'ի մզկիթ, բարուրելով թէ՝ յառաջմանէ լեալ իցէ նա մզկիթ և մտեալ 'ի վանս, և յանձն արար Շէյխի ուրումն լինել աղօթարան այլազգեաց։ քակեաց զնոր շինուածս վանաց Բեթղեհէմի, և տաճարին Ս. Յարութեան, եբարձ անտի զփայտաշէն վանդակն (Տրապիզին) որ 'ի շրջապատս մեծի գմբեթին, և եւ տանել զայն 'ի մզկիթն Օմարայ բազմութեամբ եւ աղաղակաւ, արար քննութիւն բովանդակ վանօրէից քրիստոնէից, եւ կործանեաց զնոր շինուածս զորս եգիտ 'ի նոսա։ Յաւելու Արաբացի պատմիչն թէ՝ 'ի սմին ժամանակի անկեալ էր երկպառակութիւն և խռովութիւն 'ի մէջ քրիստոնէից՝ (1468)։ 'ի թուին Հիճրէթի՝ ՌՕԶ։

Սոյն այս Մէլիք Զահր՝ որ էառ զԳողգոթայն 'ի ձեռաց Հայոց և եւ զայն ազգին Վրաց, արար և բարութիւնս ինչ միաբանացն Հայոց՝ զոր խնդրեցին 'ի նմանէ, զի 'ի սմին ժամանակի այլազգիք կամէին 'ի կապալի (տաման) առնուլ զվանս Ս. Յակոբայ, եւ արկանել զայն ընդ քաղաքական հարկաւ։ սա արգել հրովարտակաւ և անիծիւք փակեաց զայնպիսի զրկանս և զանիրաւութիւնս որոց հընարեն, որոյ պատճէնն արձանագրեալ կայ 'ի ներքին կողմ արտաքին մեծի դրան վանաց 'ի ճակատ որմոյն, որ ունի օրինակ զայս։

برز مرسوم مولانا السلطان الملك الظاهر ابو سعيد محمد چقمق
عز نصره بابطال ما احدثه ابو الخير ابن النحاس من ضمان مار يعقوب